МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

**ք. Երևան** **30.11.2023թ.**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/105
***(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)***

## ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 24-ին տեղեկագրում հրապարակվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/105» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթակարգ):

Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտեր են ներկայացվել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 01232586), իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «Ամազոն Իմպորտ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 08257786) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի նոյեմբերի 6-ի 2-րդ նիստի արձանագրության 6-րդ կետով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ և «Ամազոն Իմպորտ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերի փաթեթներում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերության կողմից 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում հայտնաբերվել են որոշակի անհամապատասխանություններ,

2. «Ամազոն Իմպորտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթում ներառված դիմում-հայտարարությունը («հավելված 1») էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված չի եղել, ինչպես նաև 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հայտնաբերվել են որոշակի անհամապատասխանություններ:

Հանձնաժողովի նույն նիստի արձանագրության 8-րդ կետով գնման ընթացակարգը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերին համաձայն կասեցվել է, իսկ մասնակիցներին ներկայացվել են հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումներ:

Հանձնաժողովի հաջորդ՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի 3-րդ նիստի արձանագրության 1-ին կետով մանրամասն նկարագրվել են այն անհամապատասխանությունները, որոնք մասնակիցներին հատկացված մեկ աշխատանքային օրում չեն շտկվել (ներկայացվել են նաև բավարար փաստական հանգամանքներ), նույն արձանագրության 4.2 կետով արձանագվել է, որ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մաս 1-ին կետի հիմքով Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած, իսկ 4.4 կետով՝ հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը որոշվել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ և «Ամազոն Իմպորտ» ՍՊ ընկերությունների տվյալները ներկայացնել լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

## ՈՐՈՇԵՑ

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ և «Ամազոն Իմպորտ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակիցներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ